Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
անհատ խորհրդատուի ընտրություն

19 օգոստոսի, 2022թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)

Առաջադրանքի անվանումը՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի մարքեթինգային ծրագրերի խորհրդատու՝ Զբոսաշրջության կոմիտեում՝ անհատ խորհրդատու

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **LIC-08**

Վերջնաժամկետ՝ 2022թ. սեպտեմբերի 2-ը

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ) իրականացման նպատակով: Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: Ակնկալվում է, որ Ծրագրի գործունեության արդյունքում կշահեն մասնավորապես Հայաստանի տարբեր մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով:

Ծրագի հետագա արդյունավետ շարունակման համար նախատեսվում է վարձել Խորհրդատու **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի մարքեթինգային ծրագրերի խորհրդատու՝ Զբոսաշրջության կոմիտեում** աշխատանքների կատարման համար՝ հետևյալ գործառույթները իրականացնելու նպատակով.

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

- Համակարգել ՏՏԵԶ Ծրագրի մարքեթինգային ենթածրագրերի ընդհանուր արդյունավետ կազմակերպումը,
- Կազմել ՏՏԵԶ ծրագրի մարքեթինգային ենթածրագրերի հիմնավորումներն ու հայեցակարգերը
- Համակարգել և վերահսկել ՏՏԵԶ Ծրագրի մարքեթինգային ենթածրագրի շրջանակներում գործող մարքեթինգային Խորհրդատուներին և Խորհրդատու ընկերություններին
- Մասնակցություն մարքեթինգային հետազոտության նախագծման և իրականացման համար խորհրդատվական կազմակերպության ընտրության գնահատման գործընթացին
- ՏՏԵԶ Ծրագրի մարքեթինգային ենթածրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերի համակարգում և վերահսկում՝

    1. Հավաքագրել և անհրաժեշտության դեպքում տրամադրել տվյալներ, նյութեր, հետազոտությունների և վիճակագրությունների արդյունքներ մարքեթինգային խորհրդատվություն իրականացնող ընկերությանը
    2. Վերանայել և ներկայացնել կարծիք մարքեթինգային խորհրդատվական ընկերության կողմից մշակվող և տրամադրվող՝ ինչպես առաջադրանքների մեթոդաբանության, այնպես էլ օգտագործվող գործիքակազմի վերաբերյալ:
    3. Վերանայել և մեկնաբանել խորհրդատվական ընկերության կողմից պատրաստված հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրում նշված ժամանակացույցի
    4. Խորհրդատվական ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների վերջնական ընդունելի տարբերակի ներկայացում ԶԿ նախագահի ստորագրմանը

5. Մարքեթինգային խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերության յուրաքանչյուր առաջադրանքի հաշվետվությունների վերաբերյալ կազմել ամփոփիչ հաշվետվություններ և ներկայացնել Զբոսաշրջության կոմիտեի նախագահին
6. Համագործակցել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի Ծրագրի կոորդինատորի և համապատասխան անձնակազմի հետ ենթածրագրերի աշխատանքների ժամանակին և որակով կատարման համար,
7. Կազմել Ծրագրի տեխնիկական աջակցության համար ներգրավվող անձնակազմի համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքները,
8. Ապահովել աշխատանքային հարաբերություններ ՀԲ ներկայացուցչների հետ ենթածրագրերին վերաբերող բոլոր հարցերի հետ կապված,
9. Ապահովել աշխատանքային հարաբերություններ Ծրագրի հիմնական շահառուների /պետական կառույցների/ հետ,
10. Ապահովել ամսեկան հաշվետվություններ, որոնցում պետք է պարունակվի տեղեկատվություն իրականացված աշխատանքների մասին,
11. Կարգավորել ցանկացած հարց/ուշացում կապված ենթածրագրի իրականացման հետ և Պատվիրատուին առաջարկել լուծումներ՝ հետագայում նման խնդիրներից խուսափելու կամ վերացնելու համար,

- Կատարել Պատվիրատուի կողմից հանձնարարված/կամ Ծրագրի Վարկային համաձայնագրով, Ծրագրի ղեկավար ձեռնարկով կամ այլ առնչվող փաստաթղթերով նախատեսված այլ գործողություններ կամ պարտականություններ:
- Թիրախային շուկաների ուսումնասիրության արդյունքների հիման վրա և ԶԿ մարքեթինգային թիմի հետ սերտ աշխատանքի արդյունքում, նախագծել և պլանավորել մարքեթինգային արշավներ՝ ուղղված զբոսաշրջային արդյունքի առաջխաղացմանը տարբեր թիրախային շուկաներում, ներառելով հետևյալ հիմնական կետերը՝
    1. Իրականացվող արշավի նպատակ
    2. Տեխնիկական առաջադրանք/բրիֆ
    3. Հիմնական կատարողական ցուցանիշներ
    4. Բյուջե
    5. Արշավի կոնցեպտ
    6. Իրականացման ժամկետներ
    7. Արշավի իրականացման գործիքներ՝ հարթակներ, միջոցառումներ, գովազդի կոնցեպտներ, վիզուալ և տեքստային նկարագիր և այլն:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի մինչև **2023թ-ի մարտ ամիսը**:

Խորհրդատուների ընտրության չափանիշներն են՝

- Բարձրագույն կրթություն մարքեթինգի կամ բիզնեսի կառավարման ոլորտում
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ մարքեթինգի ոլորտում, որից առնվազն 3-ը մարքեթինգի ծրագրերի ղեկավար
- Մարքեթինգային արշավների պլանավորման և իրականացման առնվազն 3 տարվա փորձ
- Տվյալների հետ աշխատելու, դրանք վերլուծելու կարողություն, տվյալներից օգտակար եզրահանգումներ դուրս բերելու և դրանց հիման վրա ստրատեգիկ և/կամ մարքեթինգային խորհրդատվություն ապահովելու փորձ
- Պարբերական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման փորձ՝ տարբեր ֆորմատներով՝ ներառյալ աղյուսակներ, Power point presentations, այլ վիզուալ պրեզենտացիաներ և այլն
- Անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուների գերազանց տիրապետում

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ" սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2022թ. սեպտեմբերի 2-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: